№ 21 Փետրվարի 16 (28) 1879 Փետրվարի 16 (28) № 21

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այդ էլ կը մնի։—Ներքին տեսութիւն։ Նամակ Շուշուց։ Նամակ Մեծ-Ղարաքիլիսայից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Բելգիա։—«Մշակի» հեռագիրներ։ — Ցայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Հոգևոր դպրոցների վիճակը։

ԱՅԴ ԷԼ ԿԸ ԼԻՆԻ

Մեր երէկվայ առաջնորդող յօդուածին մենք կը կամենայինք աւելացնել հետևեալ դատողութիւնները։

Արդկային ցեղն գոյութեան համար կռւի մէջ այն ցեղերը, ազգերը կամ անհատները միշտ յաղթող են հանդիսանում, որոնք որ և է յատկութեամբ իրանց հարևան ցեղերից, ազգերից կամ անհատներից զօրեղ են։ Դա մի բնական օրէնք է։

Հայերը զետեղվելով Թիֆլիսում, այս կամ այն պատճառով ուժեղ հանդիսացան մեր քաղաքի ընիկ ժողովրդից, վրացիներից, սեփականացրին առուտուրը, իրանց ձեռքը գցեցին արհեստները, կարողացան յայտնվել և առաջնակարգ տեղեր բռնել զանազան տեսակ մտաւոր և մեքենայական պարապմունքների մէջ.... Հարստութիւնը հայերի ձեռքը անցնելով, նիւթապէս ապահոված դրութեան մէջ գտնվելով, բնականաբար նրանք տիրապետեցին թէ հողային և թէ ուրիշ անշարժ կայքերի վրա։

Այդ կատարվեց փոքր առ փոքր, բայց կատարվեց անընդհատ, որովհետև հայերը ուրիշ մրցողներ չունէին։

Բայց Թիֆլիս գաղթած հայը, բուն Թիֆլիսցի դառնալով, սահմանափակվելով իր նեղ, առանձնացած շրջանի մէջ, չընդունելով դրեթէ ոչինչ դրդիչ զարկեր արտաքին աշխարհից, փոքր առ փոքր սկսեց կորցնել իր սկզբնական բարոյական և մտաւոր ոյժը, անշարժ մնաց, չը շարունակեց մտաւորապէս զարգանալ, չուզեց որոնել աւելի նոր և բազմակողմանի, ժամանակին աւելի համապատասխան պարապմունքներ, բացի վաճառականութիւնից....

Բանը այնտեղ հասաւ որ Թիֆլիսցի բարձր ուսում ստացածն էլ, վերադառնալով իր հայրենիքը և կողմ թողնելով իր բարձրագոյն ուսման արդիւնքն ու գործադրութիւնը, սկսեց վաճառականութեամբ պարապել։ Մի քանիսներ, խորշելով վաճառականութիւնից, ձեռնարկեցին նոյն առևտրական գործերին ֆինանսիստների, բանկային գործողների անունով։ Եւ դրանք ամենաբարձր ուսում ստացածների թւից էին....

Մի և նոյն ժամանակ մեզ անյայտ կամ յայտնի պատճառներից փոքր առ փոքր և կատարելապէս այլասերվելով, ուղեղով մաշվելով, Թիֆլիսցի հայը իր բնական կամ տարիների ընթացքում իր վրա պատուաստված մտաւոր անընդունակութեան պատճառով, հէնց որ ձեռնարկում էր առևտրական գործերին, ոչքան էլ բարձր ուսում ստացած լինէր նա, էլ չէր կարող զուգնթացաբար մի ուրիշ գործով պարապել....

Թիֆլիսցին անընդունակ է երկու բանով միաժամանակ պարապել, բազմակողմանի լինել միւս երկիրների հայերի պէս։ Թիֆլիսցու ուղեղը, մի քանի հաղարդիւտ բացառութեամբ, ընդունակ չէ միացնել, միւս հայերի պէս, իր անձնական շահը, ընդհանուր դաղափարի հետ, ազգին ծառայելու ձգտման հետ։ Միայն Թիֆլիսում կը պատահէք այնպիսի հայերին, որոնք երէկ սաստիկ վատված ազգասէրներ էին, իսկ այսօր մի չաղ տեղ կամ պաշտօն սրտանալով, օրինակ բանկի կամ մի ուրիշ հիմնարկութեան մէջ, յանկարծ, մի հրաշքի պէս, դառնում են կատարելապէս անտարբեր դէպի իրանց երէկվայ սիրած, պաշտած դաղափարը, ծաղրում են ամենանվայել կերպով այն մտքերը, որոնց երէկ պաշտպանում էին, արհամարհական ժպիտով նայում են այն գործիչների վրա, որոնք այսօր ծառայում են նրանց երէկվայ պաշտպանած դաղափարներին։

Մենք չենք ասում որ բոլոր Թիֆլիսցիները այսպէս են, բայց աներկիւղ հաստատում ենք որ բոլոր հայերի մէջ միայն Թիֆլիսցի հայի մէջ ամեն քայլափոխում պատահում են այդ տեսակ տիպեր, ամենաընտրեալ հասարակութեան մէջն անգամ....

Մենք այդ անմիխիթար երևոյթը ամենայն ցերեկով և հրապարակի մէջ կատարէինք, որովհետև մարդավայել ազգային դաստիարակութիւնը և կրթութիւնը երբէք համարուած չէ յանցանք և այդ XIX-րորդ դարումն, ուր ազգութեան ինքնուրոյնութիւնն, ինչպէս բնութեան օրէնք, խոստովանված և ընդունված է ամեն լուսաւորեալ ազգերէ և սրբագործուած է մարդկութեան բարեկամների գիտակցութեամբը։ Վերջապէս, ինչու մոռանում ենք որ, երբ ողորմած մեր Կայսրը իւր սուրը վերցուց լուսաւորութեան թշնամի դէմ, զոյգ իւր հաւատակից սլաւներին, հայերիս ևս դէպի նոր կեանք վերածեց—ազգովին բարգաւաճելու, ծլելու, ծաղկելու կրօնով և ազգային ինքնուրոյնութեամբ։ Այսուհետև մեզ ինչ են պէտք այն միջոցները և ճանապարհները, որոնք պիտի նմանին Մասսօններու, Քարբօնարներու ու Թուգենդբունդի ուխտերուն և նոցա գործադրած սայթաքուն ճանապարհին....թողնենք, ի սէրը Աստուծոյ, այդ անպտուղ, նեխեալ և մամռոտած խորամանկութիւնը, և համոզուած լինինք, որ մեր «հիւանդոտ խելքի բանը չէ» քնացնել ու խաբել հաղարաչեայ արգոսին. լինինք, սրտաբաց, «չիտակ» և խելօք. ոչ մեր աշխատանքը դարձնենք Դանայիդներու անյատակ կարասը ջրով լցնելն և ոչ մեր սուրբ եկեղեցին անենք կասկածելի յաչս հզօրաց աշխարհիս։ Ինչ հարկաւորութիւն ունենք մեր խեղճ եկեղեցին չեղել իւր քրիստոսաչափիւղ ճանապարհէն յօդուտ քանի մի ազգախարներու և բաղդախնդիրներու. ինչ հարկաւորութիւն ունի մեր սուրբ եկեղեցին իւր առանց նորա էլ ծանրաբեռնեալ ուսերու վրա առնուլ նորանոր բեռներ, որ ոչ քաղցր են և ոչ փոքրոգի։

Եղբայր հայեր, եկէք մին մինի ուղիղ աչք նայելով, ձեռներս կրծքերուս վրա դրած անկեղծօրէն խօսենք ու իրար ասածը հասկանանք. միթէ ամենքս էլ խորին համոզուած չենք, որ մեր եկեղեցին մինչև անգամ իւր բոլոր ոյժը ու ճիգը լարած, կարող է միայն լաւ վարդապետներ, լաւ քահանաներ և լաւ տիրացուներ պատրաստել. իսկ լաւ ժողովուրդ երբէք։ Եթէ մենք նորանից պահանջենք այդ, յիմար կը լինինք, իսկ եթէ նա խոստանայ, թէև ակամայ, այսու ամենայնիւ նա մեզ խաբած կը լինի, որովհետև այդ նորա զօրութենէն և ընդունակութենէն վեր է։ Թող եկեղեցին իւր պարտքը բարեխղճութեամբ կատարէ, իսկ մենք աշխարհականքս կատարենք մերը։ Բաժանենք աշխատանքը, որ գործերս յաջողութեամբ առաջ երթայ. չը մոռանանք քաղաքա—ստեղծութեան այս անհերքելի ճշմարտութիւնը։ Վերջապէս մեզ աշխարհականներիս համար չատ ամօթ և աներեսի բան է, վերաբերութեամբ տէրութեանը մեր սուրբ եկեղեցին խարդախ դրութեան մէջ դնել։ Դորանով մենք նորա պատիւը, վարկը և հեղինակութիւնը կը ստորացնենք։ Բաւական է, բաւական աչքերս։ Այս ինչ յիմարութիւն է մեր արածը. քանի մի դատարկաշրջիկներուն, բաղդախնդիրներուն, դեղնամօրուսեաններուն ու պամպուլիսներուն օրական ապրուստ տալու մտքով, մենք ստորացնում ենք մեր եկեղեցոյ պատիւը, զոհում ենք մեր բազմաթիւ զաւակների ապագան և ի դերև հանում ենք ժողովրդի յոյսերը և փչրում ենք նոցա ծերութեան ցուպը։ Առաւել մեզ հեչ է այդ թշուառական աշխարհակերներու (міроѣдъ) համար չինել մի անկելանոց և մինչև նոցա մահը կերակրել ինչ-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

—

Ինչպէս որ փասիան թռչունը, որ ամբոխի կարծիքով, ձիւնի մէջ գլուխը խրելով ինքը ոչինչ չէ տեսնում, և կարծում է թէ մարդիկ ևս նորան չեն տեսնում, իսկ և իսկ այսպէս ենք մենք հայերս, վերաբերութեամբ մեր հոգևոր դպրոցներին։

Արդէն ոչ օրի համար գաղտնիք չէ, որ հայերիս խորամանկութիւնը խելք ենք կարծում, և այնպէս էլ նորան գործածում ենք։ Այդ ևս բաւական չէ. ուր պէտք է առողջ դատողութիւն, «չիտակութիւն», *) ազնիւ համոզմունք, եռանդուն ջանք, անձնազոհութիւն—այս ամեն աշխարհաշէն, ազգաշէն առաքինութիւնները մենք փոխարինում ենք հայկական խորամանկութեամբ այսինքն խաբում ենք ինքներս մեզի և կարծում ենք թէ աշխարքին ևս խաբել կարողացանք, մինչ ճանաչողը ճանաչում է մեզ, արհամարհանքով, գարշանքով նայում է, գլուխը շարժում է և....թքում է մեր վրա։ Մենք մխիթարուած և շատ անձնաբաւական կերպով համոզուած մնում ենք թէ նորան խաբեցինք։

Ով հաւատացրել է մեզ միամիտ, կամ աւել ուղիղ ասել, անմիտ հայերիս (ինչ ասել կուզէ, որ խօսքս ժողովրդիս սակաւամտութեան վրա է), որ կարի հարկաւոր է «պահոտուել» հոգևորականների փէչի տակ և այնտեղից ներգործել յօդուտ հայութեան։ Այդ ինչ մոլար, հիւանդ և կարճատեսի դատմունք է։

Ո՞ր հայ ծնողքին իւր որդուն հայապէս դաստիարակելը, ո՞ր հայ մարդուն իւր հայ դրացին սիրելը, ո՞ր բարեպաշտ հային հայերէն աղօթելը, ո՞ր հարուստ հային իւր աղքատ համազգին օգնելը, ո՞ր խելօք հային իւր տգէտ կամ տկարամիտ ազգակցին խրատելը, սովորեցնելը երբ և իցէ, ո՞ւր և իցէ արգելուած է եղել, ո՞ր տէրութեան մէջ, ո՞ր թագաւորի դրած օրէնքով,—ասացէք ցուցէք, հաստատեցէք ինձ այդ։ Ես առաջուանէ գիտեմ, որ դուք (խօսքս պղտոր ջրի մէջ ձուկ որսացողներուն է) ասելու, ցուցնելու, հաստատելու, համոզելու ոչինչ չունիք, որովհետև ոչինչ դոցա նման մի բան չը կայ։ Ահա ես հրապարակաւ, ի լուր 5 միլլիոնէ բաղկացած հայ ժողովրդին առաջն բարձրաձայն ասում եմ, որ դուք ձեր հիւանդոտ երևակայութեամբ, անձնական շահերով դիմակաւորուած ստեղծել եք ճիւաղը և ինքներդ էլ սոռանից սարսափ—սարսափի եք գալիս։ Ցկարամիտներ։

Մենք ինչ կարիք ունինք թաքուն կերպով ու մութ տեղերումն կատարելու այն, ինչ որ պէտք էր լոյս ցերեկով և հրապարակի մէջ կատարէինք, որովհետև մարդավայել ազգային դաստիարակութիւնը և կրթութիւնը երբէք համարուած չէ յանցանք և այդ XIX-րորդ դարումն, ուր ազգութեան ինքնուրոյնութիւնն, ինչպէս բնութեան օրէնք, խոստովանված և ընդունված է ամեն լուսաւորեալ ազգերէ և սրբագործուած է մարդկութեան բարեկամների գիտակցութեամբը։ Վերջապէս, ինչու մոռանում ենք որ, երբ ողորմած մեր Կայսրը իւր սուրը վերցուց լուսաւորութեան թշնամի դէմ, զոյգ իւր հաւատակից սլաւներին, հայերիս ևս դէպի նոր կեանք վերածեց—ազգովին բարգաւաճելու, ծլելու, ծաղկելու կրօնով և ազգային ինքնուրոյնութեամբ։ Այսուհետև մեզ ինչ են պէտք այն միջոցները և ճանապարհները, որոնք պիտի նմանին Մասսօններու, Քարբօնարներու ու Թուգենդբունդի ուխտերուն և նոցա գործադրած սայթաքուն ճանապարհին....թողնենք, ի սէրը Աստուծոյ, այդ անպտուղ, նեխեալ և մամռոտած խորամանկութիւնը, և համոզուած լինինք, որ մեր «հիւանդոտ խելքի բանը չէ» քնացնել ու խաբել հաղարաչեայ արգոսին. լինինք, սրտաբաց, «չիտակ» և խելօք. ոչ մեր աշխատանքը դարձնենք Դանայիդներու անյատակ կարասը ջրով լցնելն և ոչ մեր սուրբ եկեղեցին անենք կասկածելի յաչս հզօրաց աշխարհիս։ Ինչ հարկաւորութիւն ունենք մեր խեղճ եկեղեցին չեղել իւր քրիստոսաչափիւղ ճանապարհէն յօդուտ քանի մի ազգախարներու և բաղդախնդիրներու. ինչ հարկաւորութիւն ունի մեր սուրբ եկեղեցին իւր առանց նորա էլ ծանրաբեռնեալ ուսերու վրա առնուլ նորանոր բեռներ, որ ոչ քաղցր են և ոչ փոքրոգի։

*) Զարմանալի բան. ոչ դրաքսուի և ոչ մեր դաւառական բարբառներէն մինի մէջ, բացի Նոր Նախիջևանէն, կարողացայ գտնել честность, l'honneteté, die Redlichkeit բառի թարգմանութիւնը, որին Նախիջևանցին «չիտակութիւն» է ասում։ Կառաջարկեմ մեր ժողովրդին և մանաւանդ պ. պ. հայ հեղինակներին իւրացնել այս բառը զրուցի ու գրութեան մէջ։ Ճշդութեան մասին ևս երաշխաւոր եմ։

թի համար ուրիշ բացատրութիւն չունենք, բացի այն որ Թիֆլիսցու ուղեղը սպառված է, անընդունակ է իր մէջ տեղաւորել երկու միտք միասին՝ անձնական շահ և ընդհանուր շահեր.... Կամ մէկը կամ միւսը,—բայց երկուսը միասին անհնարին է երևում Թիֆլիսցի հայի համար....

Եւ նա այդ բազմակողմանի ընդունակութիւնն էլ չէ ընդունում ուրիշի մէջ, որովհետև ինքն էլ այդ ընդունակութիւն չունի:

Ոչ մի օտարական հայ չի դիմի մի երիտասարդին, որ նիւթական կարողութիւն է ստացել և մի և նոյն ժամանակ կամենում է շարունակել ազգին ծառայել, ասելով՝ «ես ձեզ խորհուրդ կը տամ, թողեցէք ազգային գործը և պարապեցէք ձեր կայքի կառավարութեամբ, կարգադրեցէք նրան. երկու բան, խօ՛, անկարելի է միասին անել....»

Իսկ Թիֆլիսցի հայի, թէ պատուաւոր վաճառականի, թէ արհեստաւորի, թէ բարձր ուսում ստացածի բերանից մենք այդ լսել ենք....

Եւ Թիֆլիսցին այդ ասում է անկեղծ կերպով, համոզմունքով, որովհետև ինքն զգում է թէ անկարող է երկու բանով միասին պարապել....

Այսպիսով կատարեալ նիւթականութեան մէջ ընկղմվելով, չը շարունակելով մտաւորապէս զարգանալ, մի և նոյն ժամանակ որ և է ֆիզիօլոգիական օրէնքի զօրութեամբ ուղեղով հետզհետէ սպառվելով, Թիֆլիսցի հայը դարձել է միակողմանի, մնացել է անշարժ, դարձել է անտարբեր դէպի իր նեղ, եսական շրջանից դուրս որ և է գաղափարներ....

Եւ ի՞նչ ենք տեսնում: Ինչպէս մի ժամանակ Թիֆլիսցի հայը տնտեսական և մտաւոր կողմից յաղթող էր հանդիսացել վրացու վրա, այժմ հետզհետէ նոյն վիճակին ինքն է ենթարկվում: Օտարական հայերը, բազմանալով Թիֆլիսի մէջ, սկսում են իրանց ձեռքը դցել մեր քաղաքի բոլոր թէ առևտրական, թէ արդիւնաբերական ճիւղերը, դառնում են սեփականատէրեր, անշարժ կայքեր են վաստակում, ձեռք են դցում այն բոլոր պարապմունքները, որտեղ խելքի ոյժ է հարկաւոր....

Հատ ժամանակ չի անցնի, և մենք հաւատացած ենք, ինչպէս բոլոր նշոյլներից երևում է, որ օտարական հայերը յետ կը մղեն Թիֆլիսցի հայերին, ինչպէս սրանք մի ժամանակ յետ մղեցին վրացիներին, բայց չը կարողացան պահպանվել իրանց դրութեան մէջ, որովհետև տարիների ընթացքում մտաւորապէս այլասերվեցան:

Կապրենք և կը տեսնենք, որ այդ էլ կը լինի....

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

28 յունվարի

Յունվարի 26-ին, երեկոյեան պահուն, երբ արդէն վերադառնում էինք մեր վաճառատներից, ճանապարհին Ագուլեցունց եկեղեցու բակում, ես նկատեցի մի քանի անձինք, որոնք ժողովված էին մի կորված ծառի մօտ, ուր մի քանի ժրաջան մշակներ անդադար իրանց բահերովը փորում էին մի փոս, որը նմանում էր մի գերեզմանի, ջերմեռանդ ժամահարը, մի շամփուր ձեռքին յաճախ խրում էր այդ փոսի մէջ յորդորելով նրանց, որ դեռ ևս հողը փափուկ է և պէտք է փորել, իսկ մշակները խրախուսվելով ժամահարի խօսքերից և մի և նոյն ժամանակ վստահ իրանց գիւտին, աւելի և աւելի արագացնում էին իրանց աշխատանքը. հողը մի սաժէնաչափ արդէն փորված էր: Իմ հետաքրքրութիւնը չարժվեցաւ այս տեսարանից և ես բաժանվելով իմ ընկերներից և մտնելով եկեղեցու բակը, միտքս դրի իմանալ դորա պատճառը: Սակայն ինչքան եղաւ մեր զարմացքը, երբ ես նրանցից մինին հարցնելուց յետոյ, հետևեալ պատասխանն ստացայ. «Եղբայր,—ասում էր նա,—այսօր առաւօտեան գտնված է եկեղեցում սուրբ Յակովբայ աջի վրա (որը նոր բերված էր և բաց դրած էր եկեղեցում) մի թուղթ միայն Մ. ստորագրութեամբ, որի վրա գրված եղել է յետագայ խօսքերը—«Սիրելի եկեղեցականք, ահա այս չորրորդ անգամն է, որ իմ երազում, մի հրեշտակ գալով ինձ մօտ, ասում է որ նոքա գործած են մի մեծ մեղք, թոյլ են տուել կորել մի նշանաւոր ծառ որը եղել է հովանի մի սրբի նշխարների և ստիպում էր ինձ ձեզ յայտնելու որ պէտք է քաղվի այդ ծառի կողքը, այնտեղից հանվելու համար այդ սուրբի մասունքները և մի աւազան, որի մէջ մկրտված է մեր մայր Աստուածածինը. սակայն ես պատասխանեցի որ դուցէ չեն հաւատայ իմ խօսքերին. այդ միջոցին նա ինձ տուեց թուղթ և գրիչ, սպառնացաւ որ եթէ չը լսեն իմ խօսքերին, այն ժամանակ սաստիկ կը պատժեմ թէ քաղաքացոց և թէ եկեղեցականաց: Եւ այժմ ես կատարում եմ իմ պարտաւորութիւնը խնդրելով անյապաղ փորել տալ և հանել ամենաթանկագին գանձը»: Այստեղ վերջացրեց այդ միամիտ մարդը իր խօսքը, հետևեցնելով, որ ահա այդ պատճառով իրանք խորհուրդ տեսած են քանդելու այդ տեղը: Ես այդ չէի հաւատայ եթէ չը ստուգէի մի քանի անձերից ևս, որոնք այնտեղ գտնվում էին: Արդէն մի քանի ժամ ես սպասում էի այդտեղ տեսնելու թէ ինչ պէտք է լինի այդ գործի վախճանը, բայց որովհետև մութն արդէն սկսել էր պատել, այս պատճառով մեր եռանդուն մշակները թողին իրանց աշխատանքն միւս օրվան, իսկ ես մտածելով և զարմանալով նոցա միամտութեան վրա մեծ քայլերով չտապեցի տուն, սպասելով միւս օրվան հրաշալի աւազանի դիւտին: Միւս օրը՝ ճաշի պատարագը արձակվելուն պէս գնացի այդ սուրբ տեղը, բայց ես արդէն մի քանի րոպէ ապշած մնացած էի, տեսնելով որ երէկվայ մշակները, կրկին լքցնում էին այդ փոսը. ես ծիծաղելով մօտեցայ նորանցից մինին և հարցրի դորա պատճառը. նա յուսահատած ինձ պատասխանեց թէ աւազ, իրանց այդքան նեղութիւնը մնաց անվարձ և անպտուղ:

Այժմ թողնում ենք մեր ընթերցողներին մտածել դորա վրա, թէ ինչպէս նոքա առանց մի կարծեաց և հասկացողութեան սկսել են փորել տալ մի ծառի արմատը, հաւատալով մի կեղծ և անյայտ գրութեան, որը, իմ կարծիքով, մի խաբեբայ մարդու գործ է, որը կամեցել է այդպիսով զուարճանալ:

Ուրեմն վերջացնում եմ իմ խօսքս ասելով, որ թող այդպիսի կեղծուպատիր խօսքերի և գրուածների շատ անգամ հաւատ չընծայեն միամիտ անձինք, և այդպիսի երազատեսների նամակները փոխանակ իրագործելու, թող գրեն նրա գրութեան ետևը, որ նա այնուհետև այլ ևս չը պառկէ իր մէջքի վրա, որ կարող է նորանից աւելի հրաշքներ տեսնել, և վրդովել ժողովրդեան խաղաղութիւնը:

Ա. Դ. Ա.

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱՑԻՑ

Ժամանակաւորապէս գտնվելով իմ հայրենիքում, Մեծ-Ղարաքիլիսա գիւղում, բաղդ ունեցայ ներկայ լինել մի ներկայացման, որ կայացաւ ամսիս 4-ին երեկոյեան:

Մեծ-Ղարաքլիսի ուսումնարանական գործով զբաղված երիտասարդութիւնը, ցանկանալով օր առաջ հիմնել մատենադարանը, որի մասին «Մշակի» ընթերցողները արդէն գիտեն, մի և նոյն ժամանակ բաւականութիւն պատճառել ժողովրդին, ձեռք տուին մի ներկայացումն տալ յօգուտ մատենադարանի և վերջապէս յաղթելով զանազան արգելքներին, ներկայացրին «Արշակ II» ողբերգութիւնը և «Երկուսս էլ քաղցած ենք երկուսս էլ փող չունենք» վոդեվիլը:

Նախ քան ներկայացումն պ. Ա. Խանզատեանց կարդաց մի ճառ, որով հանդիսականներին ծանօթացրեց ներկայացնելի ողբերգութեան հետ և անտրակտների ժամանակ կարդաց Գամառ-Քաթիպայի «Հայերիս թուքը» բանաստեղծութիւնը:

պէս բարոյապէս «անկեալներու»: Գոնեա դորանով մենք մաքրած կը լինենք մեր սուրբ եկեղեցին և մեր սուրբ Աթոռը պատառաքաղներէ և հացկատակներէ:

Գրեթէ ամեն հայաբնակ քաղաք ունի իւր հոգևոր դպրոցը: Այդ դպրոցները տարաբաղդաբար, դրուած գոլով խարդախ հիմքերու վրա, հետևաբար և նոցա մէջի գործողք և սոցա գործունէութիւնը, անշուշտ, խարդախ պիտի լինէին: Խարդախ գործը վախենում է «օր արևէ», հրապարակախօսութենէ, մարդաշատ ամբոխէ, և գնում է փնտրում է իւր համար մութ, առանձնութիւն և մեռելանման լռութիւն: Ինչպէս որ «գողի սիրտը միշտ դող է», այդպէս էլ մենք երբէք ազատօրէն չենք կարող խօսել մեր հոգևոր դպրոցի գործունէութեան մասին, այլ ամենայն ինչ պարտաւոր ենք մին մինի ականջի փսփսալու, խօսելու, կասկածոտ աչքերս անդադար աջ ու ձախ դարձնելու, ամեն խորշում պտրելով լրտեսներ և պախարակիչներ: Հարցնում եմ կարծէ մի քանի պատառաբոյծների համար այսքան զոհ բերել, այսքան նրուաստութիւն կրել:

Վա՛յ այն գործին, որ թագստեան մէջ է գործվում. վա՛յ այն ազգապարծանք զաղափարին, որ մտել է այդպիսի գարշելի մարմնոյ մէջ, որին միայն սուտը, մութը, լռութիւնը և առանձնութիւնը պիտի հովանաւորեն: Այս ամեն բանէն յետ, վերջապէս, ինչ է սորա հետևանքը: Կը կորչի թանգ ժամանակը, կը կորչի աշխատանքը, կը կորչի ժողովրդի արիւն-քրտինքով վաստակած փողը, աշակերտները անպիտան կը մեծանան, նոցա ծնողք կը յուսահատուեն, կը թերահաւատուեն, և բոլոր շահը կը մնայ քանի մի դեղնամորուսեաններուն, պամպուլիոններուն և նոցա ոտքերը լիզող արբանեակներուն:

Հոգևոր դպրոցը չէ կարող և չէ պէտք, որ աշխարհական վարժատուի տեղը բռնէ: Այն չեմ ասում, որ նա ոչինչ օրինաւոր և պէտքական ուսումն (կեանքի համար հասկացիր) չէ կարող մատակարարել, դորանով հոգևոր դպրոցը իւր գլխաւոր նպատակէն ևս կը շեղուի, և կը լինի այնուհետև մեր սուրբ եկեղեցոյ համար ոչ վեհ անկիւն, այլ վէմ գայթակղութեան. և եթէ մինչև այսօր մեր եկեղեցականք թերուս էին, այսուհետև նոքա միանգամայն և ծայրէ ի ծայր անուս կը լինին հոգևոր գիտութեանց մէջ: Թերի չափով հայոց լեզուի, թերի չափով ռուսաց լեզուի, նոյնը պատմութեան, նոյնը աշխարհագրութեան, նոյնը թուաբանութեան մէջ գիտութիւնք, յիմարն էլ կը հասկանայ որ, չեն կարող փոխարինել ոչ կրօնագիտութիւն, ոչ աստուածաբանութիւն և ոչ ուրիշ գիտութիւնք, որոց տեղեկանալը անհրաժեշտ պէտք է ամեն եկեղեցւոյ պաշտօնեայի: Ուրեմն յետինն կը լինի վատթար քան զառաջինն:

Մեզ պէտք չէ խարդախ, ծպտեալ, դիմայլակեալ դպրոց, այլ պէտք է, թէև աշակերտներով սակաւաթիւ, բայց եկեղեցական գիտութեամբ հզօր բարդաւաճած հոգևոր դպրոց: Թող նորա մէջ աւելով հաւաքած «կալակուռտա» 150 աշակերտք չը լինին, այլ լինին 25—30 ընտիր տղայք կանոնաւոր հոգևոր ուսմունք պարզերես և անարկիւղ ստացողք: Եթէ այսպէս լինի մենք հաղարապատիկ առաւել կը շահուինք, քան թէ այժմ: Մի քանի պարզամիտներ պարծենալով ասում են «մեր հոգևոր դպրոցի մէջ 150—200 աշակերտք կան», ես էլ մտքիս մէջ պատասխանում եմ նոցա «վայ այդ խեղճ անմեղ 200 տղայոց, որ ի զուր պիտի կորչին:» Վասն զի թերուսութիւնը նոյն բարոյական մահն է:

Որոնք են մեր հոգևոր դպրոցի գործունեայքը: Տաս—տասներկու հոգի կարճամազ և երկայնամազ պարոններ, որոց համար վերջին արապահին այսպէս է ասում. «ախպար, պան չունիս, իրենց համար կէչէմիշ կը լան չտէ»: Այս այնպիսի բազմանշանակ վկայագիր է, որից ըստոր ես ոչինչ ուրիշ վիճակ չեմ ճանաչում: Այս 10—12 պարոնները ոչ թէ համը, մինչև անգամ հոտը առած չեն բազմակողմանի և հանճարեղ հոգևոր ուսմանց: Խելքս չէ հասնում, արդեօք դոցա ձեռքէն դուրս եկածները ինչ «չէնք ու շնորքով» եկեղեցոյ պաշտօնեայք պիտի լինին..... Ի՞նչ գիտութեան, ինչ բարոյականութեան, ինչ համոզմանց տէր են ձեռամբածուք, որ նոցա սանիկները ինչ մարդիկ լինին: Որոնց որ պէտք է թող համոզուին, որ եսամոլ, ընչաքաղց դեղնամորուսեանների և բաղդախնդիր պամպուլիոնների ձեռքէն երբէք դուրս գալու չեն Սահակներ, Մովսէսներ, Ներսէսներ, Մեսրոպներ և Ղևոնդներ:

Հոգևոր դպրոցի վարչութիւնը պիտի յանձնուի հոգևոր անձնի: Դպրոցի կառավարիչը, ի բաց առեալ ամենայն ազգակրօնական նախապաշարմունք, պիտի թաթախուած լինին հոգևոր ուսմանց և հայոց լեզուի գիտութեան մէջ. այդ կը պահանջէ հասարակ մարդկային խելքը: Հոգևոր դպրոցը մի հատիկ և անխարդախ նպատակ պիտի ունենայ, որ է պատրաստել հայոց եկեղեցոյ անձնանուէր սպասաւորներ. այդ կը պահանջէ առողջ դատողութիւնը: Հոգևոր դպրոցը պիտի ունենայ օրինաւոր ընտիր վարժապետներ, քաջ տեղեակ թէ հայոց լեզուին, և թէ հայոց ազգի և եկեղեցոյ պատմութեան: Հոգևոր դպրոցը պիտի ուղղապէս և անմիջապէս կախումն ունենայ Վեհափառ Կաթողիկոսէն, և չը լինի հոգաբարձուների ձեռքը ինթրիգայի առարկայ և ամօթալի կրքերու խաղալիկ: Հոգևոր դպրոցի հոգաբարձուք, բացի աղայութենէ, մի փոքրուսումն ևս պիտի ունենան և զգուշութեամբ պիտի մաղուին ժողովրդի մէջէն: Վերջապէս այս ևս կասեմ (հասկացողը կը հասկանայ) ոչ միշտ ձայն բազմաց ձայն Աստուծոյ է, առաւել շատ անգամ, և այդ տգէտ ժողովրդի մէջ «ձայն բազմաց ձայն չարաց է»: Մեր Վեհափառ Տէրը ունի մի այդպիսի անձն, որ իւր ալեօք զարդարեալ հասակումն, իբր «վերջին Մոհիքան հայոց եկեղեցական գիտութեան և հայոց դպրութեան» ի մոռացօնս մնացած է հիւսիսի սառնամանիքներումն: Եթէ բարեհաճէր Նա հաշտ աչօք նայելու այդ իւր յետ ընկած, բայց ամենընտիր պաշտօնեայի վրա, այն ժամանակ Նախիջևանը նորից կը ստանար իւր ոսկի դարը դպրութեան, որն ունէր նա 1827 թուականէն մինչև 1844-ը, և որոյ յիշատակը տակաւին անհետացած չէ երախտագէտ նախիջևանցիների սրտերէն... Մախլաս:

Խօսքս տակաւին աւարտած չեմ այս մասին:

Սիլլիկ

Անտրակտների ժամանակ դպրոցի աշակերտները երգում էին բաւական յարմարաւոր և ներդաշնակ երգեր։ Մի ընդարձակ սենեակ իր ժամանակաւորապէս յարմարեցրած բեմով, փոխարինում էր թատրոնական դահլիճին և լիքն էր բազմութեամբ, չը նայելով որ գները բաւականին թանգ էին նշանակված գիւղական ժողովրդի համար։ Բոլոր աթոռները բռնված լինելով, ժողովրդից շատերը զրկվեցին ներկայացումից և թատրոնասէր խումբը ստիպվեցաւ ներկայացումն կրկնել այսօր երեկոյեան, յատկապէս կանանց համար։ Այս երկու ներկայացումից զուտ արդիւնք դուցաւ 150 ռուբլի։

Ներկայացումն ամբողջապէս շատ լաւ անցաւ և հանդիսականները գոհ մնացին, չը նայելով, որ դերասաններից ոմանք առաջին անգամն էր, որ բեմի վրա դուրս եկան, իսկ մնացեալ մեծամասնութիւնը թատրոն անգամ չէր տեսել։

Պ. Բ. Նալբանդեանցը Շապուհի և պ. Ա. Խանզատեանցը Վահանի դերերում օրինակելի լաւ էին. նրանք ցոյց տուին իրանց տաղանդը թատրոնական գործում. վատ չէին նոյնպէս և պ. պ. Ցակոբեանցը և Սիմէօնեանցը Դրատամատի և Արշակի դերերում, բայց ափսոս, որ նրանք իրանց դերերը շատ վատ էին սովորել, լաւ կը լինէր և պ. Պետ. Տէր-Պետրոսեանցը Ալանոզանի դերում, եթէ միայն մի փոքր պարզ արտասանէր։ Մենք խորհուրդ ենք տալիս պ. Ն. Ազատեանցին նախ լաւապէս պատրաստվել և սովորել դերը, ապա դուրս գալ բեմի վրա, անձնավստահութիւնը լաւ բան չէ այսպիսի մի գործում, իսկ պ. Մ. Արազածունուն բոլորովին բեմի վրա դուրս չը գալ, քանի որ նա ընդունակութիւն չունի։ Պ. պ. Ցակոբեանցը և Սիմէօնեանցը բաւականին յաջող և բարեխղճաբար կատարեցին իրանց դերերը փոդրվիլում, բայց դարձեալ նրանք դերերը վատ էին սովորել։

Թատրոնասէր երիտասարդները, մանաւանդ պ. պ. Խանզատեանցը, Ցակոբեանցը և Սիմէօնեանցը, արժանի են գովութեան և խորին շնորհակալութեան այն ամեն աշխատանաց փոխարէն, որ նրանք ունեցան ներկայացումն գլուխ բերելու համար։ Ի վերա այսր ամենայնի չեմ կարող չը նկատել ձեզ պ. պ. երիտասարդներ, որ ձեր դերերի չիմանալը յարուցեց ժողովրդի տրտունջը. նա այդ վարմունքը մի կերպ ստիպողական, մինչև անգամ, իրան համար անպատուող համարեց և բողոքեց, սակայն յարգելով ձեր գործը, ձեր բարեգործական նպատակը, նա ամենայն պատրաստակամութեամբ ընդունեց, ինչպէս և միշտ ձեր հրաւէրը. այդ բաւական չէր, նա և խնդրեց կրկնել ներկայացումն. ուրեմն զգուշացէք միւս անգամ այդպէս վարվել ժողովրդի հետ, այն ժողովրդի, որ գործով ցոյց է տուել իր ջերմ համակրութիւնը դէպի ուսումնարանական և ուրիշ ազգօգուտ գործերը։

Մ. Տէր-Պետրոսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մատրաս, 2 փետրվարի

Արդէն լրացած լինելով անցեալ 1878 թուականի լրագիրների բաժանորդագրութեան ժամանակամիջոցը, մենք հարկ համարեցինք անցեալ յունվար ամսին մի ստորագրութիւն բացանել տեղիս ազգասէր անձինքների չրջանում, ներկայ 1879 թուականի համար նոր լրագիրներ բերել տալու համար։ Ուրախութեամբ պէտք է յիշել, որ գտնվեցան այնպիսի բարերար և ազգասէր անձինք, որոնք կատարեալ համակրութեամբ վերաբերվեցան մեր այս համեստ ու ազգաշահ առաջարկութեան և իրանց կարողութեան չափ ստորագրվեցան յիշեալ բարենպատակ գործի համար, որոնց համար հրապարակական յայտնում ենք մեր սրտի խորին երախտագիտութեան հաւատիքը։

Ընդամենը հաւաքվեցաւ 26 ռուբլի և 50 կ.։ Այս գումարից 18 ռ. ուղարկվեցաւ «Մեղու» և «Մշակ» լրագիրների խմբագրատուն մի տարվայ բաժանորդագրին, 9 ռ. ևս «Մանկավարժ. թերթ» ամսագրին և «Тиф. Вѣстн.» լրագրին կէս տարվայ բաժանորդութեան համար։

Նա ևս յիշում ենք մեր ամենախորին շնորհակալութիւն Բագուի «Մարդ. ընկերութեան անդամ Կ. Դուրգէնեանցին, որ ըստ յորդորանաց պ. Ա. Շահվերդեանցի (սա այն Շահվերդեանցն է, որի մասին բազմիցս յիշած ենք մեր յօդուածներում. սա այժմ պաշտօնական գործով տեղափոխված է Բագու) բարեհաճել է բերել տալ մեր ուսումնարանի համար «Արարատ» ամսագիրը 1879 թուականի համար։

Ուսուցիչք ծխական դպրոցի Մադրասի. Սարգիս Լալաբէկեանց, Յովհ. Ս. Ստեփանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ խնդրում են յայտնել որ «Կենդանիների Հովանաւորութեան» ԹԻՖԼԻՍԻ ընկերութեան անդամները և ընկերութեան գործով հետաքրքրվող անձներ հրաւիրվում են ներկայ գտնվել ընկերութեան ընդհանուր ժողովին որ լինելու է այս փետրվար ամսի 20-ին, երեկոյեան 7 ժամին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան չինութեան մէջ, Բարիատինսկի փողոցի վրա, Ալէքսանդրեան այգիի դիմաց։

—

Մեզ հաղորդում են Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ, որ իբր թէ հայր Վահան Բաստամեանց հրաժարվում է ճեմարանի տեսչութեան պաշտօնից։ Չը գիտենք որքան ստոյգ է այդ լուրը։

—

Ընթերցողները գիտեն արդէն որ ԹԻՖԼԻՍԻ նոր ընտրված քաղաքագլուխ, Անտոն Կօրգանով հրաժարվել է իր պաշտօնից։ Թիֆլիսը դարձեալ առանց քաղաքագլուխ է մնում։ Խօսում են իբր թէ Գէորգ Եւանգուլովին պէտք է ընտրեն։ Այդ էր պակաս։ Բայց մի բան մինչև այժմ չը բացատրվեցաւ։ Երբ որ Կօրգանովին պէտք է քուէարկէին և նրա համաձայնութիւնը նրա բացակայութեան պատճառով յայտնված չէր, այն ժամանակ պ. պ. Գ. Փրիդօնով և Ա. Թայիրով վերկացան տեղից և յայտնեցին որ Կօրգանով համաձայն է։ Դումայի հաւատաց նրանց և սկսեց քուէարկել Կօրգանովին։ Այժմ լսում ենք թէ Կօրգանով երբէք իր համաձայնութիւնը տուած չէր։ Մի՞թէ Փրիդօնով և Թայիրով ձայնաւորները չը պէտք է պատասխանատու լինեն իրանց արածի համար։ Եթէ ճշմարիտ է որ Ա. Կօրգանով իր համաձայնութիւնը տուած չէր, երկու պարոնների արածը ուրիշ բան չէր, եթէ ոչ Դումայի հաւատարմութեան ի չար գործ դնելը։

—

ՔՈԻԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են որ այնտեղ եղանակը բոլորովին գարնանային է դարձել։ Ամբողջ քաղաքի հասարակութիւնը զբօսնում է հրապարակական այգիում։

—

Պ. Ս. Բէգ-Նազարեանը խնդրում է մեզ յայտնել որ «Մշակի» № 15-ի մէջ տպված Ա. ստորագրութեամբ Երևանի նամակը իր գրածը չէ, ինչպէս կարծում են մի քանի պարոններ։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ փետրվարի 7-ին թատրոնասէրների խումբը ներկայացրել է պ. Գ. Սունդուկեանցի «Էլի մէկ զոհ» պիեսան։ Ներկայացումն շատ լաւ է գնացել։ Նամակագիրը մատնիր է այդ ներկայացման մասին մի քանի մանրամասներ հաղորդել։

—

Կովկասեան գրեթէ բոլոր քաղաքներից մեզ հաղորդում են, որ փետրվարի 8-ին ամեն տեղ հանդիսով կատարել են Վարդանանց տօնը։

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ որ վերջին ժամանակները հասարակութիւնը շուտ շուտ յաճախում է հայոց ներկայացումներին։

—

Արժանապատիւ Ամբրոսիոս Ռուբինեան վարդապետը խնդրում է մեզ յայտնել որ առաջիկայ կիրակի փետրվարի 18-ին քարոզելու է կաթողիկէ Ս. Գէորգ եկեղեցում։

—

Մեզ հաղորդում են ԻԳԴԻՐԻՑ, որ այնտեղ դիտաւորութիւն կայ մի օրիորդական ուսումնարան բաց անել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԷԼԳԻՍ

—

Դիմակաւոր անդրալեռնականները ազատամիտ Ֆրանսիայի բարեմտութիւնը ի չար դարձնելով յաղթող հանդիսացան այն տեղ։ Բայց նրանք դրանով չը բաւականացան, նրանք այժմ իրանց բատալիոնները Բէլգիա փոխադրեցին, և ինչ էք կարծում, մի՞թէ Բէլգիան էլ Ֆրանսիայի պէս մեծահոգի և վեհանձն կը գտնվի. նրանք հիմա, մի և նոյն դիմակի տակ, ինչպէս և Ֆրանսիայում, կամենում են որ տարրական ուսումնարանները ազատ լինեն, այսինքն, որ նրանք անկախ լինեն կառավարութենից։ Ինչպէս տեսնում էք գործը նոյնն է ինչ որ էր Ֆրանսիայում, միայն ձևն է փոխված. այնտեղ նրանք բարձրագոյն ուսումնարանների ազատութիւն ձեռք բերին, այստեղ—դրանք շատ բան չեն պահանջում, միայն դրանք կամենում են, որ ժողովրդական ուսումնարանները կառավարութեան իշխանութեան ներքոյ չը լինեն, ուրեմն և ուսումնարանների դռները ազատ են մնում. մի անգամ, որ ուսումնարանի դուռը ազատ է լինում, այդ տեղ մտնում է մեր անդրալեռնականը... Մընացածն արդէն ընթերցողը կարող է գուշակել թէ ինչ կը լինի մի ազգի վիճակը, երբ նրա ուսումնարանների մէջ, նրա մատաղ սերունդը կղերական ոգով է դաստիարակվում, այն էլ կաթոլիկ կղերական։

Ահա, մի ամենից աւելի է, որ արդէն պատերազմն սկսվել է Բէլգիայում այդ հրէշների դէմ. անդրալեռնական և կղերական բոլոր թերթերը սրբազան պատերազմ են հրատարակել և բոլոր իրանց հաւատացեալներին իրանց դրօշակի տակ են հրաւիրում. դրանցից ամենանշանաւորները, ինչպէս օրինակ «Journal de Bruxelles» և «Courrier» չեն դադարում բարձրաձայն կանչելուց. «կառավարութիւնը թող դուրս կորչի ուսումնարաններից։» Մի հարցնող լինի թէ ինչու այդքան անյագութեամբ կանչում են նրանք, որ կառավարութիւնը դուրս կորչի ուսումնարաններից. դա ի հարկէ շատ հասկանալի է. դրանք այդ անում են որպէս զի ասպարէզը իրանց մնայ, որպէս զի ապագայում նրանք կարողանան Եւրոպայի համար նոր բարոյական ժողովուրդ պատրաստել?!!

Չէ կարելի ամենաջերմ համակրանքով չը յիշել այդ փոքրիկ անկախ երկրի ազատամիտ լրագիրների անվերկայ ընդդիմադրութիւնը, որով նրանք քաջալերում են իրանց հայրենիքի կառավարութիւնը երբէք չը վհատել այդ արիւնռուշտ պատերազմից։ Այդ լրագիրներից մէկն ասում է, որ եթէ կառավարութիւնը չէ մատնում ուսումնարանները նրանց կամայականութեանը, դրա միակ պատճառն այն է, որ նա չափազանց բարձր է գընահատում իր քաղաքացիների խղճի ազատութիւնը և նրանց դէպի հաւատն ունեցած յարգանքն ու սէրը։

Այդ լրագիրներից մի քանիսն էլ այնքան զինված են կղերականների դէմ, որ մինչև անգամ ծայրայեղութեան են հասնում. նրանք ասում են, որովհետև ժողովրդի միջոցներով հիմնված ուսումնարաններում պէտք է ժողովրդի ամեն դասակարգերից էլ մանուկներ սովորեն, և որպէս զի թշնամութիւն չը ծագի որ և է կուսակցութեան մէջ, ուրեմն պէտք է աշխատել, որ այդ հասարակական դպրոցներում չէզոքութիւն պահպանվի, և դրանց կարծիքով չէզոքութիւնը միայն այն ժամանակ կարող է լինել, երբ բոլոր ուսումնարաններում այլ ևս կրօնագիտութեան դասաւանդութիւններ չեն լինի։ Այս ի հարկէ որ ծայրայեղութիւն է, բայց, խընդրեմ ասացէք, մի՞թէ այն ծայրայեղութիւն չէ, որ կաթոլիկական թերթերը աշխարհ գոռում են. «Կաթոլիկութիւն կամ մահ», մի՞թէ կառավարութիւնը պարտական է թոյլ տալ որ իր ապագայ քաղաքացիները կղերականներ լինեն։ Բէլգիական կառավարութիւնը չափազանց ազատամիտ է, որ օգուտ չը քաղէ այն փիլիսոփայական նշանաւոր դասից, որ մինչև այսօր էլ տակաւին շարունակում է ծանրանալ Ֆրանսիայի ճակատագրի վրա։

Բէլգիայի ազատամիտ լրագիրները բոլոր իրանց ձիգը թափում են դրանց դիմակները հանելու, և պէտք է խոստովանած, որ նրանք, եթէ ոչ բոլորովին, գոնէ կիսով չափ յաջողացրել են այդ. արդէն մեծ բան է, քանի որ նրանց խօսքերը արձագանք են գտնում ժողովրդի մէջ։

Ամեն մի շատ ու քիչ բանիմաց բէլգիացի երախտագիտութեան հայեացք է ձգում իրան հարևան Ֆրանսիայի, եւրոպական այդ մեծ դաստիարակի վրա, որ նրանց սովորեցրեց այդ փրկարար դասը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԿՐՕՆՇՏԱԴ, 13 փետրվարի։ Կրօնշտադի բանկի անդամները դատաստանի մատնվեցին։ Նրանցից մի քանիսը բանտարկված են։ Ասում են, որ Գրէյդը հիւանդութեան պատճառով հրաժարական է տալիս։ Երէկ Բարոնէտ Վիլիէի հիւանդանոցը մտաւ գիւղացի Պրոկոֆեվ, որ պրոֆէսսոր Բոտկինի հետազօտութեամբ հիւանդացել է այն հիւանդութեամբ, թէև թեթև կերպով, որը յայտնվել էր Աստրախանում 1877 թուին։ Հիւանդանոցի այն մասը ուր պառկած է Պրոկոֆեվը և շէնքի այն մասը, ուր նա մինչև այժմ բնակված էր, բոլորովին առանձնացրած են. նրա բոլոր ունեցածը այրել են։ Այն 48 մարդիկ, որոնք բնակվում էին Պրոկոֆեվի հետ, առողջ են, բայց քաղաքային Դուման նրանց փոխադրել է քաղաքից դուրս հսկողութեան ներքոյ գտնված մի առանձին տուն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 փետրվարի։ «Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ «Голосъ» լրագրի հատով ծախվելը արգելված է։ Ռուս թիւրքաց դաշնագրի վաւերացած օրինակը այսօր տպվեցաւ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 փետրվարի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96 ռ. 60 կ., երկրորդ 95 ռ. 60 կ., երրորդ 95 ռ., չորրորդ 95 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 234 ռ., երկրորդ 234 ռ. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը 93 ռ., երկրորդ 92 ռ. 75 կ., ոսկի 8 ռ. 37 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 23,15 պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա 200 մարկ, Փարիզի վրա 247 ֆր. 50 սանտիմ։ Տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր—Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԹԷՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՅԻՑ նոր ստացվեցան 100000 ֆունտ ֆուչանի և կեախտի թէյ սեփական փոխանակութեան 1 20 կ. մինչև 8 ր. ֆունտը։ Ֆուչանի թէյի համար ինձանից գնողներից շատերը նամակներով շնորհակալութիւն յայտնեցին, յոյս ունեմ ապագայում գնողներից նոյնպէս ստանալ։ Ծախվում է մեծ քանակութեամբ և փոքր։ Փոստայի ծախսը ինձ վրա առնում եմ։ Հասցէն Միքայէլեան կամուրջ, «Кавказъ»-ի խմբագրատան տակ։ Վաճառական Ա. Պօլոսոմին։

2—10

ПОСТУПИЛА ВЪ ПРОДАЖУ КНИГА

ШАРАКАНЪ (ՇԱՐԱԿԱՆ)

Богослужебные Каноны и Пѣсни армянской восточной церкви, переводъ съ древне-армянскаго языка Н. Эмина.

Москва. 1879. Цѣна съ пересылкою 3 р. 50 к. Выписывать можно отъ переводчика, живущаго въ Москвѣ, близъ Красныхъ Воротъ, домъ Филитиса.

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵՆՑԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ ստացվել են մեծ քանակութեամբ ՖՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻԲԻՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որարդական ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՈՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱՐԿՈՒ—ԽԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար։ Ցոյս ունեմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս է գնողները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ։

34—75

MAISON DE COMMISSION
et d'exportation
NICOLAS AMIRAGOFF ET C-o
16, Rue de la Grange-Batelière
PARIS

Կօմիսիօներական տուն ՓԱՐԻԶՈՒՄ։ Գրագրութիւն վեց լեզուներով։

Նիկողայոս ԱՄԻՐԱՂԵԱՆՑ

ՕՐԴՈՒԻԲԱԹՈՒՄ մետաքսեայ զարդարանների տէր ԿԱՐԱՊԵՏ Բաբայեանցը կամենում է մի տնային ՎԱՐԺՈՒՀԻ (гувернантка) իր մանկանց համար։

Պայմանների մասին հարցնել «Մշակի» խմբագրատանը։

1—3

Особа, КОНЧИВШАЯ С. ПЕТЕРБУРГСКІЕ ПЕДАГОГИЧЕСКІЕ КУРСЫ (теоретическіе и практическіе), даетъ уроки по всѣмъ предметамъ гимназическаго курса и по новѣйшимъ языкамъ. Готовитъ къ экзамену Домашней Учительницы. Просятъ обращаться въ контору газетнаго агентства Шавердова.

Մի օրիորդ, ՈՐ ԻՐ ՈՒՍՈՒՄԸ ԱՒԱՐՏԵԼ Է ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ» (տեսական և գործնական), ընդունում է իւր վրա գիմնազիական կուրսի դասեր ամեն առարկաներից, նոյնպէս և նոր լեզուներից։ Պատրաստում է նոյնպէս քննութեան «տնային վարժապետուհութեան» պաշտօնին։ Դիմել «Շավերդեանի լրագրական գործակալութեան կանտօրին։»

ԿՕՐՇԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԵՐԹԵՒԵԿ պատրաստում է երեխաներին ՄԻՋՆԱԿԱՐԳ բոլոր ուսումնարանների ՓՈՔՐ դասատունների համար։ ՃԱՇԻՑ ԵՏՈՑ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ։ Ֆրանսիերէն և գերմաներէն լեզուների գործնական և տէօրետիկական դասեր են տրվում։ Ուսումնարանը գտնվում է Վօրօնցօվսկայա Նաբերեժնայա փողոցի վրա, Բելևաեվի նախկին տանը, № 19.

1—3

Բժիշկ Աւետիք Բաբայեան (Բաբայեվ) ընդունում է հիւանդներին Թիֆլիսի բժշկանոցում չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ջղային և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու։ Բացի այդ բժիշկ Բաբայեան (Բաբայեվ) հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցողներին էլեկտրականութեամբ բժշկելի աղքատ հիւանդներին։ Հասցէն Սերգիեվսկայա փողոց, տուն Բայանդուրովի։

2—10

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 թվին

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետևեալ օրերից։

Լրագրի գիները և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ՌՈՒՆԶԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ" ՀԱԼԽՏԻՑ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒՐՋԱՆԻ ԿՈՒՐՍԷՔԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

ծախվում է ՇԷՕՆԻՆԳԻ ՊՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱԼԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ ԵՒ ՏԱՐԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը սկսաւ յունվարի 8-ին 1879 թուականի։

Մանկական պարտէզը ընդունվում են մանուկներ, երկու սեռի էլ, 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ տարրական դպրոցը 7-ից—12 տարեկանները։

Ուսման ընթացքը յարմարեցրած է միւս դպրոցների ընթացքին, այնպէս որ դպրոցում աւարտողները կարող են մտնել տղայք՝ տղայոց և աղջկունք՝ օրիորդաց դպրոցի առաջին դասատունը։

Պարտէզն ու դպրոցը գտնվում են Վեչեամինովսկի փողոցում Իշխան Ն. Ամատունու տանը. №—11։

ՓԵՏՐՎԱՐԻ 16. ՏԵՂԵԿԱՑՈՅՑ ԹԻՖԼԻՍ· 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(փետրվարի 15-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	53
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1630	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1320	—
Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիչնի »	229	—
Մարսելի կուրսը 245—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	30
Վենայի կուրսը ժէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բաբաթը. . .	5	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	40
» միւս տեսակը.	7	30
» չաքարաւազը.	6	—
» տրանզիտը. .	6	80
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	40
Միւս տեսակը հին սերմից.	6	70
Բուրդը թուշի . . .	8	—
» թարաքամի .	4	10
Աղիւրը Շորագալու .	1	80
» Երևանի. . .	—	—
Գարին	1	30
Մոմը ընճարպի (стеар.)	12	60
Մետաքսը Նուխվայ . .	190	—
Կախեթունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կօֆէն մօկօի. . . .	27	—
» լիանի . . .	23	—
» Մարտինկօյին	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վերայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բժշկանոցի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փօթիից . .	9. 13
Ռիօն . . .	12. 13
Միխայլօվօ. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

Մցխէթ .	1 37	
Գօրի. . .	4. 8	
Թիֆլիս. .	7. 56	

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկովի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . , .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակատ վենեբական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսցեվ ներքին հ., Բակատ վենեբական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիշեվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների։

Ուրբաթ. Լիսցեվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ վենեբական և կաշու հ., Բէյլս աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՇՈՒՇԻ. Ա. Բ. եթէ մի քահանայի, որ իր պարտականութիւնը միայն կատարում է, այդքան գովենք, ուրեմն ինչ պէտք է ասենք նշանաւոր գործողների վերաբերութեամբ։

—ՆԻԺ. **. Ձեր նամակները շուտով կը տպագրենք։ Տեղեկութիւնները բաւական հետաքրքիր են։

—ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. Մ. Հոգեւորականների անղաղար ինտրիգները ամենքին զզուացրին։ Նամակը չենք տպի, մանաւանդ որ ստորագրված չէ։

—ԹԻՖԼԻՍ. Ար. Մել. Մաէք օրերումս խմբագրատուն։

—ԵՐԵՒԱՆ. Ց. Իւրաքանչիւր ներկայացման մանրամասները եթէ տպէինք, ուրիշ յոդուածների համար էլ տեղ չէինք ունենայ։

Дозволено Цензурою 15 Февраля 1879 г. Тифлисъ

Տպարան Ց. Մարտիրոսեանցի

Типографія Мартиросіанца